



http://cfoa.am

Համայնք-ՀամաՏեղ



http://celog.am

ՀամաՏեղ ծրագրի պաշտոնաթերթ

Official Newspaper of CELoG program

Ֆրատարակվում է 2003 թվականից

Փետրվար 2017, թիվ 2(102)

Խմբագրական

ՄԻՋՅԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ՝ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ՆՈՐ ԳՈՐԾԻՔ

Միջամայնքային միավորում հասկացությունը ՀՀ Սահմանադրության մեջ առավել որոշակիորեն սահմանվեց 2015թ. տեղի ունեցած սահմանադրական փոփոխությունների արդյունքում: Այնուհետև դրան տրվեց հանրային իրավունքի իրավաբանական անձի կարգավիճակ: Օրենսդրական կարգավորման հաջորդ քայլը միջամայնքային միավորումների մասին օրենքի ընդունումն է: Հենց այդ օրենքը հանգամանորեն կամրագրի այն մոտեցումները, որոնցով Հայաստանում պետք է կյանքի կոչվեն միջամայնքային միավորումները:

Ներկայումս շրջանառության մեջ է դրված «Միջամայնքային միավորումների մասին» ՀՀ օրենքի նախագիծը, եւ այս կապակցությամբ անհրաժեշտ է կատարել համակարգային փոքր անդրադարձ:

Ընդհանրապես, միջամայնքային միավորումը միջամայնքային համագործակցության ձեւերից մեկն է եւ ոչ՝ ամենատարածվածը: Միջազգային պրակտիկայում հայտնի են միջամայնքային համագործակցության բազմաթիվ այլ ձեւեր՝ համատեղ ծառայությունների մատուցում, համատեղ վարչարարություն, ծառայությունների վաճառք/գում, ընդհանուր ռազմավարական պլանավորում եւ տարածքային զարգացում, համատեղ ֆինանսավորում, շահերի պաշտպանություն, փորձի փոխանակում, մարդկային ռեսուրսների կառավարում եւ այլն: Դրանց կազմակերպման համար ամենեւին հարկավոր չէ ստեղծել հանրային կառավարման մի նոր «ծանր» կառույց, որն ունի ներկայացուցչական եւ գործադիր մարմիններ, աշխատակազմ եւ այլն:

Այս առումով շատ ավելի ցանկալի կլիներ, որ օրենքի նախագիծն անդրադառնար ոչ միայն միջամայնքային միավորումներին, այլ նաեւ՝ միջամայնքային համագործակցությանն ընդհանրապես:

Այնուամենայնիվ, պետք է նշել, որ շրջանառության մեջ դրված օրենքի նախագիծը խիստ արդիական է, եւ հանրային կառավարման համակարգում այն կարելու խնդիր կարող է լուծել: Նախագիծը հստակ տարանջատում է օրենքով եւ կամավոր հիմունքներով ստեղծվող միջամայնքային միավորումները՝ վերջիններիս վերապահելով միայն կա՛մ պետության կողմից պատվիրակված, կա՛մ համայնքի սեփական լիազորությունների իրականացումը:

Իսկ ի՞նչ հեռանկար է բացում օրենքի հետագա կիրարկումը իրական կյանքում: Ըստ էության՝ մինչեւ այժմ ՀՀ օրենսդրությունն առանձնապես մեծ խոչընդոտներ չի ստեղծել համայնքների համար՝ սեփական նախաձեռնությամբ միավորվելու եւ համատեղ որեւէ գործունեություն ծավալելու համար: Խնդիրը համայնքային իշխանությունների ցանկության բացակայությունն է՝ միավորվելու եւ համագործակցելու, ինչի համար պատճառ կարող են հանդիսանալ փոխադարձ անվստահությունը եւ հնարավոր կոռուպցիոն մեխանիզմների նկատմամբ անհրաժեշտ վերահսկողության անհնարինությունը: Նոր օրենքի նախագիծը չի փարատում նման կասկածները եւ իր մեջ չի պարունակում համապատասխան խթանող մարդեր, որոնք կմոտիվացնեն համայնքային իշխանություններին՝ ծավալելու միջամայնքային փոխշահավետ համագործակցություն:

Պատկեր, սակայն, այլ է՝ օրենքով ստեղծվող եւ պետության կողմից պատվիրակված լիազորություններ իրականացնող միջամայնքային միավորումների դեպքում: Տարիներ շարունակ կենտրոնական իշխանությունը լիազորությունների ապակենտրոնացման (ՏԻՄ-երին նոր լիազորություններ տրամադրելու) գործընթացի դանդաղ լինելն «արդարացրել» է համայնքների ինստիտուցիոնալ թույլ կարողություններով եւ նոր լիազորություններ ստանձնելու անպատրաստությամբ: «Միջամայնքային միավորումների մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ, ենթադրաբար, կստեղծվեն համապատասխան նպատակավոր պայմաններ, որպեսզի կենտրոնական իշխանությունը, իր իսկ նախաձեռնությամբ, պետական կառավարման մարմիններին վերապահված որոշ լիազորություններ արդյունավետ իրականացնելու նպատակով, համայնքների որոշակի տիրույթում օրենքով ստեղծի միջամայնքային միավորում եւ այդ լիազորությունները պատվիրակի նրան՝ այդպիսով է՛լ ավելի մոտեցնելով հանրային ծառայությունների հասանելիությունը բնակիչներին:

Այսպիսով կարող ենք ասել, որ կենտրոնական իշխանությունների համար կարծես թե վերանում են այն «անհաղթահարելի խոչընդոտները», որոնք ստեղծված ժամանակ նրանց հետ էին պահում Հայաստանում ապակենտրոնացման գործընթացը շարունակելուց եւ դրան ավելի մեծ թափ հաղորդելուց:

Հույս ունենեք, որ օգտագործելով օրենսդրական այս հնարավորությունը, պետությունը հանձն կառնի օրենքով ստեղծվող միջամայնքային միավորումների կազմավորման գործընթացի պատասխանատվությունը՝ դրանով իսկ իրականացնելով երկրում երկար սպասված կառավարման ապակենտրոնացումը:

Վ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Դ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Խմբագրական խորհրդի անդամներ

ՄԵՐ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆԸ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ, ԹԻՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆ Ե



«Համայնք-ՀամաՏեղի» գրուցակիցն է Համայնքների ֆինանսիստների միավորման (ՀՖՄ) փորձագիտական թիմի նորանշանակ համակարգող, ՀՖՄ ավագ փորձագետ Վահրամ Շահբազյանը:

- Վերջերս Դուք նշանակվեցիք Համայնքների ֆինանսիստների միավորման փորձագիտական թիմի համակարգող: Որո՞նք են լինելու Ձեր գործառնությունները:

- Մեր երկար տարիների գործընկերոջ՝ Դավիթ Թումանյանի անժամանակ մահվանից հետո, նրա իրականացրած գործառնությունները բաժանվեցին երկու մասի՝ վարչական ու փորձագիտական, եւ ՀՖՄ ղեկավարի որոշմամբ փորձագիտական մասի պարտականությունները դրվեցին ինձ վրա: Սակայն, ըստ էության, իմ գործառնությունների էական փոփոխություններ չեն եղել, եւ ես շարունակելու եմ կատարել այն աշխատանքները, ինչ արել եմ մինչեւ այսօր:

ԱՎԱՐՏՎԵՑԻՆ «ՄԻՋՅԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԲՆՆԱԿՐԿՈՒՄՆԵՐԸ

Ինչպես հայտնի է, ՀՀ սահմանադրական բարեփոխումներից հետո մի շարք օրենքներ եւս ենթարկվեցին փոփոխությունների եւ համապատասխանեցվեցին փոփոխված Սահմանադրությանը: Զանգի որ Սահմանադրությունում կան դրույթներ նաեւ միջամայնքային միավորումների (ՄՀՀ), դրանց կազմավորման մասին, առաջ եկավ «Միջամայնքային միավորումների մասին» օրենք ունենալու անհրաժեշտությունը: Բազմաթիվ քննարկումների արդյունքում մշակվեց եւ պատկան կառույցներին ներկայացվեց «Միջամայնքային միավորումների մասին» օրենքի նախագիծ, որն, ինչպես պարզվեց, վերանայման կարիք ունի եւ պետք է լրամշակվի հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարության աշխատակիցների միջազգային հանդիպումների արդյունքում ձեռք բերած փորձը, եվրախորհրդարանի կողմից ԵՄ Արեւելյան գործընկերության երկրների համար այդ բնագավառում իրականացվող ծրագրի եւ ՀՖՄ կողմից իրականացված հանրային եւ փորձագիտական քննարկումների արդյունքները: Այսպիսով, վերոնշյալ օրենքի նախագիծը կրկին հայտնվեց քննարկումների սեղանին:

ՀամաՏեղ ծրագրի նախաձեռնությամբ կազմակերպվեցին եւ իրականացվեցին մի քանի քննարկումներ, որոնցից վերջինը տեղի ունեցավ փետրվարի 10-ին Երեւանում, Էրեբունի Պլազա հյուրանոցում: Հանդիպմանը մասնակցում էին ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ), ՀՀ Տարածքային կառավարման եւ զարգացման նախարարության (ՏԿԶՆ) ներկայացուցիչներ, ՀամաՏեղ համընկերության անդամ կազմակերպությունների ղեկավարներ, համայնքապետեր, համայնքապետարանների աշխատակիցներ, միջամայնքային գործող կառույցների փորձագետներ:

Ողջունելով ներկաներին՝ ՀՀ ՏԿԶՆ տեղական ինքնակառավարման վարչության պետ Աշոտ Գիլոյանը կարեւորեց միջամայնքային համագործակցությունը: Վերջինս նշեց, որ տարիներ շարունակ եղել է «Միջամայնքային միավորումների մասին» օրենքի նախագիծ, սակայն այն մինչեւ հիմա օրենքի ուժ չի ստացել: Ըստ նրա, այսօր տրված է այդ հնարավորությունը եւ պետք է հասնել այն բանին, որ նախագիծը բարելավվի եւ ընդունվի: Իսկ քննարկման մասնակիցներին կոչ արեց ներկայացնել առաջարկություններ, որոնք կնպաստեն ունենալ ամբողջական ու լիարժեք փաստաթուղթ: Էջ 3 →

«Տեղեկատվության ազատության մասին»

ՀՀ օրենքն ընդունվել է 2003թ., սակայն ժամանակն ու գարգացումները ցույց տվեցին, որ ինչպես այս, այնպես էլ մի շարք այլ օրենքների դրույթներ ոչ միայն չեն կիրառվում, այլ նաև պարբերաբար անտեսվում են: Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը (ԺԱԱ) «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀամաՏեղ) ծրագրի շրջանակներում իրականացնում է ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մի քանի օրենքներով նախատեսված պարտադիր գործառնությունների դիտարկում: Այս նպատակով «Ասպարեզ» ակումբը մարզ առ մարզ տեղեկության համամասն մեկական հարցում է հղել ՀՀ բոլոր համայնքապետերին, խնդրելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքին համապատասխան տրամադրել համայնքների ղեկավարների մոտ տնօրինվող մի շարք տեղեկություններ, որոնք վերաբերում են ՏԻՄ գործառնություններին և որևէ օրենքով սահմանված գաղտնիք չեն պարունակում: Համաձայն վերջին զեկույցի, նախորդ տարի անցկացված հարցումներին Հայաստանի 896 համայնքներից 569-ը չի պատասխանել:

Իսկ, թե որոնք են մերժելու պատճառները եւ մի քանի այլ հարցերի շուրջ զրուցեցինք Գյումրի քաղաքի ավագանու անդամ, Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի ղեկավար Լեւոն Բարսեղյանի հետ:

- Ձեր կարծիքով, ինչու են համայնքապետերը հրաժարվում տրամադրել անհրաժեշտ տեղեկությունները:

- Արդեն 15 տարի է՝ զբաղվում

ԴԱՏԱԿԱՆ ՀԱՅՑ՝ ԸՆԴԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԵՐԻ

ենք տեղեկատվության ազատության խնդիրներով ու պարբերաբար հանդիպում ենք այս երեւոյթին, երբ մարդիկ հրաժարվում են տրամադրել անհրաժեշտ տեղեկությունները: Այդ երեւոյթը կա բոլոր ոլորտներում, որոնց հետ աշխատել ենք:

Ինֆորմացիա չտրամադրելու առաջին պատճառն, ըստ իս, անտեղյակությունն է: Օրինակ, շատ համայնքապետեր գիտեն իրենց պարտականությունները, որոնք կատարել են, բայց անտեղյակ են «Տեղական ինքնակառավարման մասին» («ՏԻ մասին») ՀՀ օրենքի որոշ դրույթներից, իրենց պրակտիկայում քիչ են առնչվել տեղեկատվության ազատությանը վերաբերող կետերին և չեն տիրապետում տեղեկատվություն տրամադրելու մեխանիզմներին:

Նրանք զարմանում են, թե մենք ով ենք, որ իրենցից տեղեկություն ենք հարցնում համայնքի բյուջեի կամ ավագանու որոշումների վերաբերյալ:

Օրենքի չիմացության այս բացը փորձում ենք լրացնել ուսուցանելով. ծանոթացնում ենք օրենքին, մարդկանց տեղեկացնում ենք իրենց պարտականությունների մասին, եւ արդյունքում շատերը կարճ ժամանակ անց սկսում են կատարել օրենքի պահանջները: Բայց կան նաև այնպիսիք, ովքեր ոչ թե չգիտեն օրենքը, այլ պարզապես «հավես չունեն» կատարելու դրա պահանջները:

Երկրորդ պատճառը համարում են կանխամտածված կամ



դիտավորյալ թերացումը, երբ համայնքի ղեկավարը լավ տիրապետում է օրենքին, բայց չի տրամադրում ինֆորմացիա: Եվ ստեղծվում է այն տպավորությունը, որ այդ փաստաթղթերում կա այնպիսի տեղեկատվություն, որի հրապարակումը կարող է ինչ-որ կոռուպցիա կամ ապօրինի գործարք բացահայտել, եւ փորձում են փակ պահել հասարակությունից:

Երրորդ պատճառը զուտ տեխնիկական է, որին հետզհետե ավելի քիչ ենք հանդիպում: Նախկինում դժվարանում էին պատասխանել էլեկտրոնային տարբերակով, կամ ձմռանը ճանապարհները փակվում էին, ու մարդիկ չէին կարողանում նամակները հասցնել փոստատան և այլն:

- Դուք պատրաստվում եք դատական հայց ներկայացնել մոտ մեկ տասնյակ համայնքապետերի դեմ: Կարծում եք, որ սա հար-

ցի լուծման ճիշտ տարբերակ է:
- Մենք փորձում ենք խուսափել այս եղանակից, բայց...

Ամբողջ տարվա ընթացքում փորձում ենք խնդիրը կարգավորել խաղաղ ճանապարհով. առաջին անգամ հարցմանը չպատասխանած համայնքապետերին երկրորդ անգամ է հարցում ուղարկվում: Անգամ խնդրել ենք նշել չպատասխանելու պատճառները, մեր իրավախորհրդատուն փորձում է զանգել, բացատրել, բայց շատ հաճախ ցուցաբերվում է ակնհայտ արհամարհական վերաբերմունք: Եղել են վիրավորանքներ, անգամ եղել է համայնքի ղեկավար, որն ասել է, որ եթե ինքը որոշեց զբաղվել «Ասպարեզ» ակումբով, ապա՝ լավ չի լինի: Եվ, բնականաբար, նման անձանց կարգի հրավիրելու տարբերակը դատարան դիմելն է:

Նախորդ տարվա վերջում ուսումնասիրվել է ԺԱԱ տեղեկության հարցումներին չպատասխանած եւ այսպիսով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջները խախտած համայնքապետերի ցանկը, այդ հարցումների անտեսման պատճառները, եւ կազմվել է տեղեկության հարցմանը պատասխանելու ու տեղեկությունների տրամադրումը պարտավորեցնող դատական հայց ծափաթաղ, Գոռավան, Տրաղարապատ, Արագածի, Տրառատ, Բազարան, Զաղսի, Կոշ, Բյուրական, Արագածավան համայնքների ղեկավարների

դեմ, որոնք շուտով դատարան կներկայացվեն:

- Իսկ, ընդհանուր առմամբ, ի՞նչ ավարտ են ունենում նմանատիպ դատական հայցերը, եւ արդյոք դրանք կարող են դաս լինել մյուսների համար:

- Ես կարծում եմ, որ խնդիրը, որին մենք պարբերաբար առնչվում ենք, կարող է մասամբ կարգավորվել համայնքների խոշորացման արդյունքում. նախ, որ գործ կունենանք ավելի քիչ համայնքների հետ եւ հետո՝ նոր աշխատակազմերը, որոնցում աշխատակիցների թիվը համեմատաբար մեծ է, ավելի բարեխիղճ կգտնվեն եւ ժամանակ կգտնեն ու կկատարեն օրենքի պահանջները:

Մենք չենք ասում՝ հարգեք մեր աշխատանքը, այլ պետք է ընդամենը կատարել օրենքի պահանջները:

Ընդհանուր առմամբ, մեր գործունեության 15 տարիների ընթացքում ունեցել ենք նմանատիպ 70 դատական հայց՝ ընդդեմ նախագահի աշխատակազմի, պետեկամուտների կոմիտեի, դպրոցների տնօրենների, համայնքապետերի: Դրանք գրեթե բոլորը շահել ենք, պարտվել ենք մեկ հայցով, մեկ հայց էլ շահել ենք մասնակիորեն:

Արդյունքում՝ տրամադրվել է անհրաժեշտ ինֆորմացիան, ավելին, մի շարք հայցերի դեպքում ստացել ենք նաև դատական ծախսերի փոխհատուցում:

Հ. ԶԵՐՈՒՅԱՆ

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԱԿՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Գեղարքունիքի մարզի համայնքների կայքերի օրինակը

2017թ. փետրվարի 8-ին ՀամաՏեղ ծրագրի շրջանակում Սեւանի համայնքապետարանում տեղի ունեցավ հանդիպում-քննարկում «Համայնքների պաշտոնական համացանցային կայքերը: Մասնակցային էլեկտրոնային գործիքներ եւ դրանց կիրառման առանձնահատկությունները. Գեղարքունիքի մարզի համայնքների կայքերի օրինակը» թեմայով:



Միջոցառմանը մասնակցում էին Գեղարքունիքի մարզպետարանի, Սեւանի, Գավառի, Մարտունու, Նորատուսի համայնքապետարանի աշխատակիցներ, ավագանու անդամներ, համայնքի ակտիվ քաղաքացիներ, համայնքում գործող կազմակերպությունների ներկայացուցիչներ, ՉԼՄ-ների ներկայացուցիչներ:

Ողջույնի խոսքով հանդես եկավ «Տեղեկատվական համակարգերի զարգացման եւ վերապատրաստման կենտրոն» (ՏՀԶԿ) ՀԿ նախագահ Գրիշա Խաչատրյանը:

Միջոցառման մասնակիցներին ողջունեց նաև Սեւանի համայնքապետարանի ղեկավարի խորհրդական Արմինե Ղուկասյանը: Բանախոսը հակիրճ անդրադարձավ համայնքապետա-

րանի աշխատանքների կազմակերպման գործում համայնքապետարանի պաշտոնական կայքի՝ www.sevacity.am, դերին, առկա ձեռքբերումներին: Հիմնական զեկուցմամբ հանդես եկավ «Տեղեկատվական համակարգերի զարգացման եւ վերապատրաստման կենտրոն» ՀԿ նախագահ Գրիշա Խաչատրյանը: Բանախոսը ներկայացրեց ՀամաՏեղ ծրագրի առաքելությունն ու հիմնական նպատակները: Այնուհետեւ անդրադարձ կատարվեց

նակները: Այնուհետեւ զեկուցմամբ հանդես եկավ ՏՀԶԿ աշխատակից Ռոբերտ Գրիգորյանը: Ներկայացվեցին Գեղարքունիքի մարզի Վարդենիս (www.vardenis.am), Գավառ (<http://www.gavarigaghagapetar.am>), Մարտունի (<http://martunihamaynq.am>), Նորատուս (<http://130.193.121.183>) համայնքների կայքերը: Նշվեցին կայքերի առավելություններն ու թերությունները, շահագործման աշխատանքների բարելավման մեխանիզմները: Որպես դրական օրինակ, նշվեցին Դիլիջանի, Արվյանի, Աշտարակի համայնքային կայքերը: Ռ. Գրիգորյանը ներկայացրեց ՀամաՏեղ ծրագրի պաշտոնական պորտալը՝ www.celog.am: Նշվեց, որ կայքում առկա են տեղեկություններ ՀամաՏեղ ծրագրի, ՏԻ ոլորտի բարեփոխումների, ոլորտը կարգավորող օրենսդրության եւ քաղաքականության վերաբերյալ: Պորտալը հնարավորություն է տալիս սուրբաբանչյուր քաղաքացու ստանալ տեղեկատվություն, ներկայացնել իրեն հուզող հարցերը, արտահայտել իր տեսակետը եւ մասնակցել ոլորտում տեղի ունեցող գործընթացներին:

Ceelog.am կայքի

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԲՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ

2017թ. փետրվարին շարունակվեցին ՀամաՏեղ ծրագրի թիրախային համայնքների տարեկան բյուջեների, հնգամյա զարգացման ծրագրերի և այլ նախագծերի հանրային քննարկումները

Վեդի

2017թ. փետրվարի 3-ին հանրային քննարկումներ տեղի ունեցան Արարատի մարզի Վեդի համայնքում: Ըննարկման էին դրված Վեդի համայնքի 2017թ. բյուջեի և Վեդի համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագրի նախագծերը: Վեդու համայնքապետարանի դահլիճը բազմամարդ էր. հրավիրված էին համայնքի բնակիչներ, ավագանու անդամներ, համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմնի անդամներ, համայնքապետարանի աշխատակիցներ, ինչպես նաև՝ դպրոցների տնօրեններ, ուսուցիչներ և այլոք: Համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Անդրանիկ Ավետիսյանը սկզբում ներկայացրեց համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագրի նախագիծը: Համայնքի զարգացման տեսլականը ներկայացնելուց հետո անդրադարձ կատարվեց համայնքի ոլորտային զարգացման հեռանկարներին և ծրագրերին: Մասնավորապես, ներկայացվեցին 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագրով նախատեսվող կապիտալ աշխատանքները: Կատարվելիք աշխատանքներից ուշադրության են արժանի համայնքում նախատեսվող ասֆալտապատման աշխատանքները՝ մոտավորապես 280 մլն դրամի ներդրմամբ, թիվ 3 մանկապարտեզի վերանորոգման, կանաչապատման, բարելավման և Վեդիում ջրամբարի կառուցման աշխատանքները: Վերջինս նախատեսվում է իրականացնել ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին:

Այնուհետև Ա. Ավետիսյանը ներկայացրեց Վեդի համայնքի 2017թ. բյուջեի նախագիծը: Առանձին-առանձին ներկայացվեցին բյուջեի եկամտային և ծախսային մասերը: 2017թ. բյուջեի ծախսերի գերակշիռ մասը՝ 72%-ը, ուղղվելու է համայնքապետարանի և համայնքային ենթակառուցվածքի կազմակերպությունների պահպանմանը, մնացածը՝ համայնքային ծառայությունների մատուցմանը և կապիտալ աշխատանքներին: Ըննարկման մասնակիցները տարբեր հարցեր ուղղեցին ֆինանսական բաժնի պետին, մասնավորապես՝ կապված «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն, աշխատողների աշխատավարձերից ամսական պահվող 1000 դրամներին: Ֆինանսական բաժնի պետը պատասխանեց, որ 2017թ. հունվարի 1-ից այդ օրենքը գործում է, և աշխատավարձերից պահումներն արդեն կատարվելու են օրենքով սահմանված կարգով: Ըննարկման ավարտին ելույթով հանդես եկավ Համայնքների ֆինանսիստների միավորման (ՀՖՄ) փորձագետ Վահե Սարգսյանը՝ կարեւորելով համայնքներում կազմակերպվող նման քննարկումները, հնարավորություն տալով բնակիչներին ներկայացնելու իրենց առաջարկությունները՝ քննարկվող նախագծերի վերաբերյալ:

Փարաբլր

2017թ. փետրվարի 8-ին Արմավիրի մարզի Փարաբլր համայնքում տեղի ունեցավ համայնքի ավագանու ընդլայնված նիստը, որին հրավիրված էին համայնքային ենթակառուցվածքի կազմակերպությունների ներկայացուցիչներ, համայնքի բնակիչներ, հասարակական կազմակերպությունների անդամներ և այլոք:

Օրակարգում ներառված էին, ի թիվս այլ հարցերի, համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագրի և համայնքի 2016թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին համայնքի ավագանու որոշման նախագծերը, ինչպես նաև՝ համայնքի



2013-2016թթ. քառամյա զարգացման ծրագրի իրականացման հաշվետվությունը:

Համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագրի նախագիծը մասնաճյուղ կերպով ներկայացրեց համայնքի ղեկավար Սամվել Վարդանյանը: Այնուհետև ելույթ ունեցան համայնքի ավագանու անդամները, որոնք զարգացման ծրագրի նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին համայնքի ղեկավարին: Հարցերի պատասխաններն ստանալուց հետո համայնքի ավագանու անդամները մի քանի առաջարկություններ արեցին, որոնք հորդորեցին համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացնելու և տարեկան բյուջեները կազմելու հնարավորինս անդրադառնալ հետեյալ հարցերին, մասնավորապես՝ վերաձեռնակելու, որոշակիորեն լրամշակել համայնքի տեսլականը, մշակել շեքշիռությունների արտաքին ձեռնարկման և հարդարանքի միասնական ձեռնարկ, թարմացնել համայնքի մարդկային ռեսուրսների շտեմարանի տվյալները, ավելացնել համայնքային ենթակառուցվածքներում էներգաարդյունավետ և էներգախնայող համակարգերի կիրառումը՝ որպես համայնքային բյուջեի ծախսերը կրճատելու միջոց: Նիստին ներկա համայնքի բնակիչները ևս հարցեր ուղղեցին զեկուցողին, որոնք համայնքի ղեկավարը հանգամանալից պատասխանեց:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի նախագիծը քննարկելուց հետո, համաձայն հաստատված օրակարգի, համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Մ. Մարգարյանը ներկայացրեց համայնքի 2016թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը: Համաձայն վերջինիս՝ համայնքի վարչական բյուջեն կատարվել է 103.6%-ով, որից՝ հարկային եկամուտների գծով՝ 109.1%, այլ եկամուտների գծով՝ 114.8%, իսկ համայնքի ֆոնդային բյուջեն՝ 100.9%-ով:

Նիստում քննարկման հաջորդ հարցը համայնքի 2013-2016թթ. քառամյա զարգացման ծրագրի կատարման հաշվետվությունն էր, որը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի ընդհանուր բաժնի պետ Ս. Օհանյանը: Վերջինս հերթականությամբ ներկայացրեց բոլոր այն ծրագրերը, որոնք տեղ էին գտել զարգացման ծրագրում, և որպեսզի տեղի տեղեկատվություն դրանց իրականացման մասին: Ներկաները մի քանի հարցեր ուղղեցին զեկուցողին, որոնց անդրադարձավ նաև համայնքի ղեկավարը:

ԹՈՒՄԱՆՅԱԼ

2017թ. փետրվարի 10-ին համայնքում կազմակերպված հանրային քննարկմանը դրվեցին հետեյալ հարցերը՝ համայնքի 2016թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվության նախագիծը և համայնքի 2017թ. բյուջեի նախագիծն՝ արդյունքահեն ձեռնարկով:

Ըննարկմանը ներկա էին համայնքի ավագանու անդամներ, համայնքի ղեկավարին կից համայնքի հնգամյա զարգացման ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմնի անդամները, բնակավայրերի վարչական ղեկավարները, համայնքապետարանի աշխատակիցները, համայնքի միջնակարգ դպրոցի տնօրենը, ուսուցիչներ, Թումանյան քաղաքի և Զարինջ բնակավայրի նախադպրոցական ուսումնական հաստատությունների (ՆՈՒՀ) աշխատակիցները, համայնքի բնակիչներ, ինչպես նաև՝ ՀՖՄ ավագ փորձագետ Վահրամ Շահբազյանը:


Օրակարգի առաջին հարցը ներկայացրեց համայնքի ղեկավար Լեւոն Չավարյանը: Համայնքի 2016թ. բյուջեի ընդհանուր եկամուտները նախատեսվել են մոտավորապես 107,019.1 հազար դրամ, կատարվել են 105,608.5 հազար դրամով կամ 98,8%-ով, այդ թվում սեփական եկամուտները՝ 95,3%-ով, իսկ պաշտոնական դրամաշնորհները՝ 100,0%-ով: Կապիտալ ծախսերի համար ՀՀ պետական բյուջեից

վերաբերյալ, որոնց համայնքի ղեկավարը տվեց սպառնալից պատասխաններ:

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց համայնքի աշխատակազմի ֆինանսիստ Անուշ Ամիրջանյանը: Նա նշեց, որ արդեն երրորդ տարին է, որ համայնքի բյուջեն կազմվում է արդյունքահեն ձեռնարկով: Համայնքն ընդգրկված է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ) ֆինանսավորմամբ և ՀՖՄ-ի իրականացմամբ «Արդյունքահեն բյուջետավարման ներդրում, 3-րդ փուլ» ծրագրի թիրախային 40 համայնքների ցանկում: Այդ ծրագրի փորձագետների տեխնիկական աջակցությամբ մշակվել է նաև համայնքի 2017թ. հակիրճ բյուջեի նախագիծը, որը բազմացվել է բաժանվել էր հանրային քննարկման մասնակիցներին: Բացի այդ, պատրաստվել էր նաև համայնքի 2017թ. բյուջեի նախագծի ցուցադրանյութ, որը մասնակիցներին հնարավորություն տվեց ավելի տեսանելի հետեւել նախագծի ներկայացմանը:

Համայնքի 2017թ. բյուջեի եկամուտները պլանավորվել են 114,200.6 հազար դրամի չափով, այդ թվում սեփական եկամուտները՝ 25,419.8 հազար դրամ կամ 22.0%, և պաշտոնական դրամաշնորհներ՝ 88,780.8 հազար դրամ կամ 78.0%: Համապատասխանաբար, համայնքի 2017թ. բյուջեի ընդհանուր ծախսերը պլանավորվել են 114,200.6 հազար դրամի չափով, այդ թվում ընթացիկ ծախսեր՝ 107,840.6 հազար դրամ, կապիտալ ծախսեր՝ 6,360.0 հազար դրամ: Չեկուցողը մանրամասն թվարկեց համայնքի բյուջեով նախատեսված բոլոր ընթացիկ և կապիտալ ծրագրերը: Զանգի որ համայնքը բազմաբնակավայր է, առաջին անգամ բյուջետային ծախսերը ներկայացվեցին նաև ըստ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի (տե՛ս ստորև բերված գծապատկերը):

Ըննարկման մասնակիցները հնչեցրին բազմաթիվ հարցեր և առաջարկություններ:



նախատեսված էր նպատակային հատկացում 1,700.0 հազար դրամ, որը նույնպես տրվել է ամբողջությամբ:

Համայնքի 2016թ. բյուջեի վարչական մասի ծախսերը նախատեսվել են 105,249.1 հազար դրամ, որոնք փաստացի կատարվել են 98,040.9 հազար դրամով կամ 93,2%-ով: Համայնքի 2016թ. բյուջեի ֆոնդային մասի ծախսերը նախատեսվել են 9482,7 հազար դրամ, փաստացի կատարվել են 8620,2 հազար դրամով կամ 90,9 %-ով:

Ըննարկման մասնակիցները զեկուցողին հարցեր ուղղեցին համայնքի 3 ՆՈՒՀ-երի միավորման, կապիտալ ծրագրերի իրականացման վիճակի, բյուջեի և հնգամյա զարգացման ծրագրի համապատասխանության և այլ ուղղությունների

ներ համայնքի բյուջեով նախատեսված աշխատանքների վերաբերյալ, որոնց հանգամանալից պատասխաններ և եզրակացություններ տվեց զեկուցող, համայնքի ղեկավար Լեւոն Չավարյանը: Որոշ մասնագիտական հարցերի վերաբերյալ պարզաբանումներ տվեց նաև ՀՖՄ ավագ փորձագետ Վահրամ Շահբազյանը: Ընդհանուր առմամբ, ծավալվեց բավական շահագրգիռ քննարկում բարձրացված հարցերի շուրջ, որի արդյունքում համայնքի 2017թ. բյուջեում կկատարվեն որոշ փոփոխություններ ու լրացումներ, այնուհետև նոր նախագիծը կներկայացվի համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

«Համայնք-ՀամաՏեղ» ամսաթերթը շարունակում է իր ընթերցողին ներկայացնել տեղական ինքնակառավարման հայկական մոդելների մասին՝ Արեւիկ Հարությունյանի «Պանկուից մեր օրերը» եզակի աշխատության ուշագրավ էջերը

Զաղաքային ինքնավարությունը հեղինակմի դարաշրջանում

Հայկական լեռնաշխարհում ցեղային միությունների, ինչպես նաև պարտված ցեղերի միավորման շնորհիվ (մ.թ.ա III - IV դար) Հայկական պետության կազմավորման ժամանակաշրջանում առաջացել են տասնյակ նոր եւ ավելի խոշոր քաղաքներ: Զաղաքային համայնքների կառավարման համակարգում առկա ինքնավարության եւ քաղաքացիների ներգրավվածության մասին տեղեկատվություն կա հելլենիզմի դարաշրջանի Հայաստանի պատմության մեջ:...

ընդ եւ այլն: Յուրաքանչյուր քաղաք ունեցել է իր սեփական գործարար: Իսկ թագավորի գործերը կարող էին քաղաք մտնել միայն պատերազմի կամ թագավորի դեմ այս կամ այն քաղաքի ապստամբության դեպքում:

Միաժամանակ, քաղաքներն ունեցել են ներքին ինքնավարություն: ճիշտ է, Հայաստանի քաղաքները չեն եղել քաղաք պետություններ, սակայն Տիգրանակերտի օրինակը պարզորոշ կերպով ցույց է տալիս, որ քաղաքային համայնքն ունեցել է որոշակի ինքնավարություն: Զաղաքային ինքնավարության բարձրագույն մարմինը եղել է քաղաքային խորհուրդը, որի անդամներն ընտրվել են ազատ քաղաքացիների կողմից: Ընդձեռված ինքնավարության իրավունքը ազատ քաղաքացիներին տվել է ոչ միայն քաղաքային խորհրդի անդամներին ընտրելու եւ այս միջոցով համայնքի ինքնավարության գործընթացում իր կամքը արտահայտելու հնարավորություն: Ուշագրավ է այն փաստը, որ ըստ քաղաքային ինքնավարության իրավունքի՝ թեեւ ազատ քաղաքացին միաժամանակ հարկատու էր կենտրոնական իշխանությանը, այսուհանդերձ, մ.թ.ա. III - I դարերում նա ենթարկվել է ոչ թե համապետական, այլ քաղաքային ինքնավարության օրենքներին: Այսինքն՝ յուրաքանչյուր քաղաքի քաղաքային խորհուրդը հաստատել է օրենքներ, եւ քաղաքացին ենթարկվել է ավագանու կողմից հաստատված օրենքներին: Շարքային քաղաքացին դատվել է տեղական ընտրովի դատարանում, որի անդամներին եւս ինքն է ընտրել:

Քաղաքային ինքնավարության մարմինները կառավարել են կարգավորել են քաղաքի ներքին վարչական, դատական, տնտեսական ու մշակութային կյանքը: Հետաքրքրական է, որ ինքնավարության մարմինները թեեւ ընտրովի էին, այսուհանդերձ, որպես կանոն, ազատ քաղաքացիները նախընտրել են իրենց ընտրելու իրավունքը, որոնք ունեին մեծ արհեստանոցներ՝ «գործոց տներ», ագարակներ, դաստակերտներ:

Ինքնավարության մարմինն են ունեցել նաեւ էթնիկական - կրոնական խմբերը: Բանն այն է, որ հատկապես մեծ քաղաքներն ու-

նեցել են խայտաբղետ բնակչություն (հատկապես մեծ է եղել հրեաների թիվը): Զաղաքային բնակչության էթնիկական - կրոնական տարբեր խմբերն ապրել են առանձին համայնքներով՝ քաղաքի առանձին թաղամասերում, որոնք ունեցել են իրենց ներքին վարչական մարմինները, դատարանները եւ մշակութային, կրոնական հիմնարկները: Քրեական ծանր հանցագործությունները եւ տարբեր համայնքների անդամների միջեւ առաջացած դատական գործե-



ընկնվել են համաքաղաքային դատարաններում:

Քաղաքական - տնտեսական ինքնուրույն միավորումներ կամ համայնքներ են եղել նաեւ հեթանոսական տաճարներն իրենց պատկանող բնակավայրերով՝ ավաններով, գյուղերով, դաստակերտներով, ագարակներով եւ հողային տիրույթներով: Քրեական դատը եղել է հարուստ եւ հզոր ազդեցություն ունեցել երկրում: Ըստ Չենոբ Գլապի վկայության՝ Տարոն գավառի մեծագույն թվով մեկն ուներ 12 մեծամեծ ավաններ եւ դաստակերտներ: Նման միավորումներում հողը պատկանել է տաճարներին եւ տնօրինվել նրանց կողմից: Այս համայնքները քաղաքների պես ունեցել են ներքին ինքնավարության եւ արտոնությունների իրավունքներ, որոնք օգտվել են տվյալ համայնքի ազատ համայնականները: Տաճարական հողերը վարձակալող ազատ համայնականները, կիսակախյալ եւ կախյալ գյուղացիները հարկերը վճարել են տաճարներին:

Ազատ քաղաքացիներից բացի, քաղաքներում փոքր թիվ չեն կազմել ազատագրված եւ ըն-

չագուրկ բնակիչները՝ ստրուկները, որոնք իրավագուրկ էին: Նրանք համարվել են սեփականություն, եւ սեփականատերը իրավունք է ունեցել նրանց ոչ միայն ծեծելու, խեղանդամ անելու, այլեւ՝ սպանելու: Հայաստանում ստրուկության հիմնական աղբյուրը եղել է պատերազմը: Ապստամբության վկայությամբ՝ Տիգրան II-ը միայն Կապադոկիայից Հայաստան է բերել մոտավորապես 300 000 գերեվարված մարդ:

Դասային խտրականությունը խիստ նկատելի է: Քաղաքներին պատկանող հողերը բաժանված են եղել ազատ քաղաքացիների միջեւ: Արհեստավորները եւ հասարակ քաղաքացիներն իրենք են մշակել իրենց հողաբաժինները, իսկ ստրուկները եւ հարուստ քաղաքացիները՝ ստրուկների, կախյալ գյուղացիների ու վարձկան մշակների միջոցով: Ազատ քաղաքացին ինքնավարության իրավունքի հետ մեկտեղ նաեւ օգտվել է հարկային, պարհակային, զինվորական եւ այլ արտոնություններից, որոնք շնորհվել են թագավորներին կողմից:

Դասային խտրականության բոլոր տարրերով հանդերձ ազատ քաղաքացուն ընդհանրապես ինքնավարության իրավունքը, քաղաքացիների կողմից ընտրված քաղաքային խորհուրդը եւ տեղական դատարանը, քաղաքի համար ընտրովի մարմին կողմից հաստատված օրենքները, ազատ քաղաքացիների համար օրենքով նախատեսված արտոնությունները, քաղաքի պաշտպանությանը եւ հասարակական կարգի պահպանմանը ծառայող քաղաքային զորամասը՝ այս ամենը միայն խոսում է հելլենիզմի դարաշրջանի Հայաստանի պետական - հասարակական կյանքի բարձր մշակույթի մասին: Այստեղ նաեւ գնահատականի է արժանի կենտրոնական եւ քաղաքային ինքնավարության մարմինների միջեւ իրավասությունների եւ պարտականությունների հստակ սահմանազատման փաստը:

Քաղաքացիներն իրենց իրավական ու սոցիալական դրությամբ ավելի բարձր են կանգնած եղել, քան ազատ գյուղացիները կամ համայնականները: Քաղաքացիների արտոնությունների վերաբերյալ հիշատակություն կա Տիգրանակերտի հուճարեն արձանագրության մեջ: Սակայն պատմաբանների ուշադրությունը առա-

վել գրավել է Մովսես Խորենացու վկայությունը, ըստ որի՝ Վաղարշակ թագավորը հրամայում է, որպեսզի քաղաքացիների հարգն ու պատիվը ավելի լինի, քան գյուղացիներինը, եւ որ գյուղացիները պատվեն քաղաքացիներին, ինչպես իշխաններին. «Հրաման տայ եւ քաղաքացեաց մարդկան արգոյ եւ պատիւ լինել առաւել քան գգեղչկաց. եւ գեղչկաց պատուել գբաղաքացիս որպես գիշխանս. եւ քաղաքացեաց մի կարի առ գեղչկօք պերճանալ, այլ եղբայրբար վարի վասն բարեկարգութեան եւ անախանձոտ կենաց, որ է շինութեան եւ խաղաղութեան կենաց պատճառք, եւ որ ինչ նման այսոցիկ»: Խորենացին օրենսդրական եւ այլ կարգի մի շարք սահմանումներ վերագրելով Վաղարշակ թագավորին, նշում է, որ թագավորը իրավարարներ կարգեց արքունի տանը, քաղաքներում եւ ավաններում: Այս ուշագրավ տեղեկությունը Բ. Առաքելյանը մեկնաբանել է. «Խոսքը վերաբերում է քաղաքներում եւ ավաններում հավասարապես հաստատվող տեղական իշխանությանը, որը պետք է պաշտպաներ այդ վայրերի բնակիչներին իրավասություններով եւ հետեւելը նրանց պարտավորությունների կատարմանը: Ավանն, այսպիսով, հավասարեցվում է քաղաքին, իսկ գյուղի կամ շենի մասին խոսք չկա եւ չէր էլ կարող լինել»:

Հայաստանի քաղաքները IV դարում դեռեւս պահպանել են իրենց կիսահինքնավար կարգավիճակը: Այս առումով ուշագրավ է Գ. Սարգսյանի գնահատականը: Քննելով քաղաքացիների արտոնությունների մասին Տիգրանակերտի հուճարեն արձանագրությունը եւ Մովսես Խորենացու վկայությունը, պատմաբանը իրավացիորեն եզրակացնում է, որ «բոլոր տվյալները խոսում են այն մասին, որ Հայաստանի քաղաքները 4-րդ դարում դեռեւս պահպանում էին հելլենիստական ժամանակաշրջանի քաղաքային կազմակերպության կարեւորագույն գծերը. դրանք անմիջապես թագավորի հետ կապված կիսահինքնավար քաղաքային համայնքներ էին, ունեին իրենց կառավարման օրգանները եւ վայելում էին մի շարք իրավունքներ ու արտոնություններ»:

Ըստ «Պանկուից մեր օրերը» գրքի

USAID FROM THE AMERICAN PEOPLE

«ՀԱՄԱՅՆՔ-ՀԱՄԱՏԵՂ» ամսաթերթը
Լրատվական գործունեություն
իրականացնող՝ «Համայնքների
ֆինանսիստների միավորում» ՀԿ
Գրասենյակի վկայական՝
թիվ 03U063471,
տրված՝ 06. 02. 2004 թ.

Թերթը հրատարակվում է Ամերիկայի
ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային
գաղափարների գործակալության
օժանդակությամբ իրականացվող «Հանրային
մասնակցություն տեղական
ինքնակառավարմանը» (ՀամաՏեղ) ծրագրի
շրջանակներում: Այստեղ արտահայտված
տեսակետները միմիային հեղինակներին են եւ
պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ
կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ԿՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈՐՅՈՒՐԳ
ՎԱՀԱՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ՎԱՀՐԱՄ ՇԱՀԱԶՅԱՆ
ԱՐԲԱՀԱՄ ԱՐՏԱՇԵՍՅԱՆ
ՆՎԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԲՈՐԻՍ ԱՎԱՍՏԻՆԻՅԱՆ
ՀՈՒՓՈՒՄԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԴԱՎԻԹ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ԸՆԱՐԻԿ ԱՅՎԱԶՆՎԱՆ
ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Թողարկման պատասխանատու՝
Կմբագիր
ԱՐԵՎԻԿԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Մեր հասցեն՝
Երեւան, Երվանդ Զոհրաբի 20,
4-րդ հարկ
Հեռախոս՝ 011 5313 97, 011 5313 98
Էլ. փոստ՝ info@cfoamail.am
Կայք՝ http://cfoa.am/
Տպագրված է «Տիգրան մեծ»
հրատարակչության տպարանում,
Երեւան, Արշակունյաց պող. 2
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ,
տպաքանակը՝ 2000 օրինակ:
Թերթը տարածվում է անվճար: